

պատմում է Վանականի ու իւր գերութիւնը,—իսկ վերջինս վախճանուել է 2—700 հայոց, 1261 փրկչական թուին. հաւանական չէ, որ նա Վանականի մահից յետոյ դարձեալ 103 տարի ապրէր: Երեկ ձեռագորի քննութեամբ արտագրողները կամ սպագորելիս դարձրել են քրիստոսը:

Սուրբ Գէորգի փոքրիկ, սիրուն դմբէթը կանգնած է 4 փոքր կամարների վրայ. յատակը սալաքարով է ծածկուած. եկեղեցու թէ պատերը և թէ դմբէթը չորս կողմից լուսամուտներ ունին: Բնմի աջ և ձախ կողմերում կան պատարագամատոյց խորաններ: Հարաւային պատի վրայ արձանագրուած է.

«Ի տաւնի սրբոյն Գէորգայ ա պատարագ Շէրանշահի է անխախն»:

Եկեղեցու թէ երկարութիւնը և թէ լայնութիւնը 6 արշին է. բնմի բարձրութիւնը 1 արշին 2 վերչոկ: Տաճարի շուրջը կան խաչքարեր և գերեզմանաքարեր. քարերից մէկի վրայ գրուած է. «Այս է հանգիստ Մկրտիչ պարսն Տր. ի ՌճԻԴ»—1124 հայոց ու 1675 փրկչական թուին:

VIII

ԳՈՂ ՄԽԻԹԱՐԻ ԴԱՄԱՐԱՐԱՆԸ

Սուրբ Գէորգ եկեղեցուց դէպի արեւմուտք, մի փոքր աւելի բարձր բլրի վրայ կանգնած է հասարակ քար ու կրով շինուած և փայտածածկ շէնք, որ երկու սենեակներից է բաղկացած. արեւելեան մասը յարմարացրած է բնմի՝ խաչկալով ու վէճ քարով, իսկ արեւմտեան մասում, փոքրիկ չափանի մէջ գրուած են երկու տապանաքարեր. և շնայելով, որ մէկի վրայ գրուած է Գրիգոր քահանայ, իսկ միւսի վրայ Ազան, հենց այս տեղն է համարուում Գոշի աւճիւնը պարունակող դամբարանը: Թէ տեղացիները և թէ հետու գիւղերից գալիս են այս տեղից հող տանելու՝ ցատուկներից աղատուելու և հիւանդութիւններից բուժուելու համար, այս միևնոյն բանը լինում էր և կիրակոս պատմագրի օրերում¹⁾:

Շիրմի պարզութիւնից էլ երևում է Մխիթար Գոշի հոգու

¹⁾ «Եւ տարեալ հանգուցին զմա առաջի դրան եկեղեցւոյն փոքրաւոնի, որ կայ ի զլուի վանացն յարեմաից կողմանէ, ու մինչև ցայսօր զերեզման նորա օգնէ ցուազնիւց, որք հաւատով ապաւինին յաջօթս նորա, և չհող տեղոյն համապաղ տանեն ի պէտս չիւանդաց մարդոյ և անասնոյ, զի Աստուած զփառաւորէն իւր փառաւորէ կենդանութեամբ և մահուամբ—նայն. էջ 128.»

վեհաթիւնը, այնքան փառաւոր և հոյակապ շէնքեր կառուցանել տալով, իւր համար այս պարզ և անշուք դամբարանն է շինել տալիս ¹⁾։

Դամբարան-մատուռի երկարութիւնն է 10 արշին և կէս, լայնութիւնը 4 արշին 2 վերշուկ։ Դամբարանի հարաւային պատի տակ կանգնած է մի խաչքար, որի պատուանդանի վրայ արձանագրուած է։

«Սարգիս Սարկաւազ կէսաւրեայ փոխեցաւ ի որս, յիշեցէքս։ Վերջացնելով մեր նկարագիրը, շենք կարող չափառաւ, որ Դոշայ վանքի նման մի թանկագին պատմական յիշատակարան այսօր բոլորովին անխնամ և անտէր է մնացել։ Ճիշտ է, մեր ժամանակի քաղաքակրթութեան պահանջներն ուրիշ են, բայց այդ չէ նշանակում, թէ եղած սրբավայրերը, որ մեր նախնեաց յիշատակարաններն են և զարերի ընթացքում առաջ են մղել մեր երկրի քաղաքակրթութիւնն ըստ ժամանակի պահանջի, պէտք է թողնենք, որ մեր աչքի առաջ քայքայուեն։



¹⁾ «Եւ ի ժամանակի ծերութեան, ի զուի վանիցն յաղմէ կողմանէ շինեաց կկեղցի մի շիրիմ գերեզմանի իւրոյ, կքով և վիմօք ժամուցնալ սրբազործ, յանուն իամբարանն Փրկառօր Առաւելոյն մերոյ, օրհնելոյն յախանան ամեն։» Նոյնք, էջ 126-ւ։